14) «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության 03.08.2017թ. թիվ 930-Ն որոշում.

2017թ. ընթացքում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել կենսաթոշակային ապահովության ոլորտում առցանց մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը՝ կենսաթոշակների նշանակման և վճարման գործընթացում առկա ռիսկերը նվազեցնելու, ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև կենսաթոշակների նշանակման ու վճարման գործընթացի վարչարարության պարզեցմանը:

Այս նպատակով իրականացված օրենսդրական փոփոխությունների և «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի կատարելագործման արդյունքում 2018թ-ից ապահովվել է ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համակարգերի զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով կենսաթոշակ և պարգևավճար նշանակելը (վերահաշվարկելը) և վճարելը:

Աշխատանքներ են տարվել գործատուի մասին տեղեկատվությունը հաշվառելու և աշխատանքային ստաժը հաշվարկելու ընթացակարգերը կատարելագործելու նպատակով համապատասխան ծրագրային ապահովության մշակման, պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի («Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգ) լրամշակման և տեղեկատվական ենթահամակարգը 2018 թվականի մարտի 1-ից գործարկելու ուղղությամբ:

Գործարկվում է աշխատանքային գրքույկների հաշվառումը և աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու համար էլեկտրոնային լուսապատճենների ստեղծումն ապահովող տեղեկատվական ենթահամակարգը:

Պետական կենսաթոշակների վճարման գործընթացի արդյունավետությունը մեծացնելու, վարչարարությունը պարզեցնելու նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (ընդունվել են ՀՀ Ազգային Ժողովի 2017 թ. դեկտեմբերի 6-ի նիստում), որով առաջարկվում է միասնական սկզբունքների ներքո սահմանել կենսաթոշակները անկանխիկ եղանակով վճարելու համար նախատեսված հատուկ բանկային (սոցիալական) հաշիվ բացելուն և վարելուն, այդ հաշվից օգտվելուն, հաշվին առկա միջոցները տնօրինելուն առնչվող առանձնահատկությունները:

Հստակեցվել են նաև միջազգային կազմակերպությունում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող (պաշտոնեական պարտականությունները կատարող) անձանց կենսաթոշակի իրավունքին առնչվող հարաբերությունները: Մասնավորապես, սահմանվել է կենսաթոշակային վճարը, որը վճարելը միջազգային կազմակերպության կողմից իր հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող (պաշտոնեական պարտականությունները կատարող) անձանց համար պայման է այդ ժամանակահատվածները կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժում հաշվառելու համար:

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակից՝ միջազգային կազմակերպությունում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող (պաշտոնեական պարտականությունները կատարող) անձանց համար միջազգային կազմակերպությունն իր միջոցներից կատարելու է սոցիալական վճարներ, ինչի հիման վրա պետական բյուջեից կկատարվի կուտակային հատկացում, որն էլ իր հերթին հետագայում կավելացնի անձին վճարվող կուտակային կենսաթոշակի չափը:

Միաժամանակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով և ՍՊաշտոնատար անձանց գործունեության սպասուհիների, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակների հիմքում դրված՝ հիմնական կենսաթոշակի չափը, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը, զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը, մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը 2017 թվականի ընթացքում չեն փոխվել:

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1491-Ն որոշմամբ 2015 թվականի հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 16000 դրամ: Աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքն առաջին տասը տարվա համար սահմանվել է 800 դրամ, տասը տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար՝ 500 դրամ:

ՀՀ կառավարության 2015 թվականի հունիսի 10-ի թիվ 629-Ն որոշմամբ 2015 թվականի հուլիսի 1-ից հիմնական զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 16000 դրամ, իսկ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը՝ 1500 դրամ:

ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 28-ի թիվ 895-Ն որոշմամբ 2014 հուլիսի 1-ից մասնագիտական կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի չափը սահմանվել է 14000 դրամ, իսկ մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 5000 դրամ:

### **3. Սոցիալական պաշտպանություն**

#### **Հաշմանդամներ և տարեցներ**

**Հաշմանդամության ուղորտի պետական քաղաքականությունն** ու նպատակային ծրագրերն ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և սոցիալական ներառմանը:

2017թ. շարունակվել են հաշմանդամության բնագավառի օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին համապատասխանացնելուն ուղղված աշխատանքները:

ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի N 1 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «2017-2021 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը»:

Հետևողական աշխատանքներ են իրականացվել հաշմանդամության գնահատման նոր մոդելի ներդրման ուղղությամբ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 114-Ա/1 հրամանի համաձայն, առաջին անգամ բժշկասոցիալական փորձաքննության համար դիմած անձանց կարիքներն Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման սկզբունքներով գնահատելու և բազմակողմանի գնահատման արդյունքում վերականգնողական ծառայությունների կազմակերպման նպատակով՝ իրականացվել է փորձնական ծրագիր: Փորձնական ծրագրի շրջանակում անձի բժշկասոցիալական փորձաքննություն իրականացվել է ԱՀԿ ՖՄԴ սկզբունքների հիման վրա մշակված չափորոշիչներով: 193 անձ «Բժշկասոցիալական վերականգնման ծառայություններ» պետական նպատակային ծրագրի շրջանակներում վերականգնողական անհատական ծրագրերի հիման վրա ստացել է վերականգնողական բուժօգնություն:

2017թ. իրականացվող պետական նպատակային ծրագրերի շրջանակներում հաշմանդամներին անվճար տրամադրվել են պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ և այլ վերականգնողական պարագաներ:

Լրամշակվել են պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տեխնիկական բնութագրերը, դրանցում ներառվել են դրույթներ տրամադրվող պարագաների օգտագործման, պահպանման և անվտանգության կանոնների, պարագաների որակի միջազգային կամ միջպետական ստանդարտների համապատասխանության վերաբերյալ:

Միաժամանակ, ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թ. սեպտեմբերի 7-ի N 1151-Ն որոշումը, համաձայն որի փոխվել է հաշմանդամի սայլակների և լսողական սարքերի տրամադրման ընթացակարգը՝ հնարավորություն ընձեռելով շահառուին պետական հավաստագրերի միջոցով ձեռք բերել իր անհատական կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան հաշմանդամի սայլակ կամ լսողական սարք:

Պետական աջակցություն է ցուցաբերվել «ՓրկությունՈՍ, «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպություններին և «Աուտիզմ ազգային հիմնադրամին»՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և երիտասարդներին սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելու համար:

2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմում է 193 432 անձ, որից 8 233-ը՝ հաշմանդամ երեխա:

**Տարեցների հիմնահարցերի** բնագավառում պետական քաղաքականության հիմնական նպատակն է նպաստել խնամքի կարիք ունեցող տարեց մարդկանց կյանքի որակի բարձրացմանը: 2017թ. ընթացքում շարունակվել են տարեցների սոցիալական պաշտպանությանն ուղղված ծրագրերի իրականացումը, պետության կողմից որդեգրվել է տարեցների համար արժանապատիվ կենսապայմաններ ապահովելու և ըստ նրանց գնահատված անհատական կարիքների՝ ծառայություններ մատուցելու քաղաքականություն:

2017թ. տարեցների հիմնահարցերի ոլորտում գերակա խնդիր է համարվել «Ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության այլընտրանքային ծառայությունների նոր մոդելների ներդրման համար նախադրյալների ստեղծումը» միջոցառումը, որի իրականացման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից 2017 թ. մայիսի 18-ի N 20 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «Ծերացման հետևանքների հաղթահարման ռազմավարությունը և ռազմավարության իրականացման 2017-2021 թթ. միջոցառումների ծրագիրը»:

Ռազմավարության միջոցառումների ծրագրով 2017 թ. նախատեսված միջոցառումների շրջանակում մշակվել է ակտիվ ծերացումն ապահովող այլընտրանքային ծառայությունների նոր մոդելների (ծրագրերի) նախագծեր, մասնավորապես՝

1. Սոցիալական օգնականի ծառայության ներդրում.
2. Տարեցների առողջ ապրելակերպի և ակտիվ ժամանցի ակումբ-ցերեկային կենտրոնի ստեղծում.

3. Տնային պայմաններում խնամքի տրամադրման ծառայության ներդրում՝ ըստ տարեցի գնահատված կարիքների.
4. Համայնքահեն շուրջօրյա խնամքի տան ստեղծում.
5. Տարեցի խնամքի կազմակերպումը խնամատար ընտանիքում:

Ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 25-ի N 1112-Ն և 2015թ. հոկտեմբերի 17-ի N 1069-Ն որոշումներում, նպատակ ունենալով հստակեցնել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվողների խնամքի տրամադրման գործընթացները:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թ. օգոստոսի 31-ի N 1071-Ն որոշման, բնակարանների գնման վկայականների միջոցով բնակարաններ ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի կենտրոնի ննջարանային մասնաշենքում ապօրինի բնակվող ութ ընտանիքի:

Խնամքի տրամադրման գործընթացի կանոնակարգման և հստակեցման նպատակով փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թ. հունիսի 6-ի N 83-Ս/1 հրամանում, մասնավորապես, հստակեցվել է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ քաղաքացիների ուղեգրման գործընթացը (2017 թ. դեկտեմբերի 22-ի N 61-Ս/1 հրաման):

Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտի որոշ ծրագրեր և ծառայություններ մրցակցային սկզբունքով պատվիրակման միջոցով իրականացնելու համար անհրաժեշտ իրավական դաշտի ապահովման նպատակով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թ. դեկտեմբերի 25-ի N 163-Ս/1 հրամանով հաստատվել է պետական աջակցության տրամադրման նպատակով սոցիալական պաշտպանության ոլորտում ծառայություններ մատուցող իրավաբանական կամ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող անձանց ընտրության համար մրցույթի անցկացման կարգը և անհրաժեշտ ձևերը:

2017 թ. պետական աջակցություն է ցուցաբերվել «Առաքելություն Հայաստան՝ ԲՀԿ-ին, «Հանս Քրիստիան Կոֆոեդ» ԲՀ-ին, «Վանաձորի տարեցների տուն» ԲՀ-ին տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցելու համար:

Քուվեյթի Պետության կառավարություն աջակցությամբ 2017 թվականին իրականացվել է «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի անկողնային խնամքի մասնաշենքի կահավորումը, կենցաղային և բուժ.սարքավորումներով ապահովումը և մեկնարկել է տարածքի բարեկարգումը, որը կշարունակվի 2018 թ. :

Տարեցների ենթաոլորտում «Խնամքի կարիք ունեցող 18 տարեկանից բարձր տարիքի անձանց խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- **Տարեցներին շուրջօրյա խնամքի ծառայություններ**

Միայնակ տարեցներին և հաշմանդամներին շուրջօրյա խնամքի ծառայություններ են մատուցում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող հինգ տուն-ինտերնատ՝ Երևանի N 1, Նորքի, Վարդենիսի նյարդահոգեբանական, Գյումրու տուն-ինտերնատները և «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց

խնամքի կենտրոնը: Տուն-ինտերնատներում խնամվող 1210 կենսաթոշակառուները գտնվում են պետության լրիվ խնամքի ներքո:

- **Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում**

Այս ծրագրով նախատեսված միայնակ տարեցներին տնային պայմաններում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություններ է մատուցում նախարարության համակարգում գործող «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը Երևան քաղաքում սպասարկում է 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառուի:

- **Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ**

«Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնին կից հոգեկան առողջության ցերեկային կենտրոնում խնամքի և սոցիալական սպասարկման ծառայություն են ստանում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 30 անձ:

- **Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացնում է որոշակի բնակության վայր չունեցող անձանց ժամանակավոր կացարանի տրամադրման ծրագիր և այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից «Հանս Քրիստիան Քոֆոեդ» բարեգործական հիմնադրամին հատկացվում է ֆինանսական միջոցներ՝ 100 անօթևան անձի ժամանակավոր (մինչև 90 օր ժամանակով) կացարան տրամադրելու և սոցիալական տարբեր ծառայություններ մատուցելու համար:

- **Երեխաների հիմնահարցերի բնագավառ**

ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ին N30 արձանագրային որոշմամբ ՀՀ կառավարությունը հավանությանն է արժանացրել «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի»-ը, որով սահմանվել են երեխաների իրավունքների պաշտպանության նպատակները, գերակայությունները, հիմնախնդիրները և առաջիկա տարիներին դրանց լուծմանն ուղղված համապատասխան միջոցառումները: Ռազմավարության հիմնական գերակայությունները և սկզբունքները համահունչ են Ինստիտուցիոնալ խնամքից համայնքային խնամքին անցման համաեվրոպական ուղեցույցի և ՄԱԿ-ի Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույցի հիմնական սկզբունքներին: Գերակայություններն են՝ երեխայի իրավունքների պաշտպանության համակարգի բարելավումը, հաշմանդամություն ունեցող երեխաների ներառումը հասարակություն, հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության, ինչպես նաև ուսումնական հաստատություններում սովորողների համալիր անվտանգության ապահովումը, իրավախախտում կատարած, բռնության ենթարկված, հակասոցիալական վարք դրսևորած անչափահասների վաղ հայտնաբերումը, բռնության դեպքերի կանխարգելումը, Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովումը:

Պայմանավորված վերոգրյալով առաջարկություն է ներկայացվել ՀՀ կառավարություն «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունները այլընտրանքային ծառայությունների վերակազմավորման վերաբերյալ, համաձայն որոնց



վերակազմավորված կազմակերպություններում մասնագիտական ծառայություններ կտրամադրվեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում հաշմանդամություն ունեցող 3-18 տարեկան երեխաներին, կապահովվի այդպիսի երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանն աջակցությունը, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին աջակցությունը:

Հաստատությունների տեղակայման մարզերի գնահատված կարիքներին համապատասխան նախագծերով առաջարկություն է ներկայացվել առկա միջոցների շրջանակում տարբեր համայնքներում ստեղծել երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոններ, որոնք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին, ըստ գնահատված կարիքների, կտրամադրեն մասնագիտական ծառայություններ, այդ թվում կտրամադրվի աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, մասնավորապես 0-6 տարեկան երեխաների խնդիրների հայտնաբերումը, կանխարգելումը և վաղ միջամտությունը: Նոր ստեղծված կենտրոնների ծառայությունների մատուցումը կպատվիրակվեն մարզում գործող մասնագիտացված կազմակերպություններին:

2017 թ. սեպտեմբերի 22-ին հաստատվել է «Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Մյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» հիմնադրամի վերակազմակերպելու մասին ՀՀ կառավարության N 1398-Ն որոշումը, համաձայն որի փոխվել են այդ կազմակերպության հիմնական նպատակը և գործունեության առարկան, ինչի արդյունքում հաստատությունում շուրջօրյա խնամք ստացող 45 երեխաները վերադարձել են կենսաբանական ընտանիքներ: Ներկայում նոր ստեղծված կենտրոնում և արտակենտրոն այլընտրանքային խնամքի ծառայություններ է տրամադրվում համայնքի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և նրանց ընտանիքներին:

2017թ. դեկտեմբերի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ Ընտանեկան օրենսգրքում փոփոխությունները և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենսգրքում (այսուհետ՝ օրենսգիրք) սահմանվել է խնամատար ընտանիքը, իսկ մասնագիտացված և ճգնաժամային խնամատար ընտանիքը՝ որպես խնամատարության հատուկ տեսակ: Այն նախատեսվել է որպես հաշմանդամություն, ծանր առողջական խնդիրներ, դաստիարակության դժվարություններ ունեցող, հոգեկան կամ վարքի խանգարումով, խորը սթրես ապրած, բռնության ենթարկված (տրավմայի ենթարկված) երեխաների, ինչպես նաև անչափահաս մայրերի և նրանց երեխաների խնամքի կազմակերպման ձև: Մասնագիտացված խնամատարությունը ներառում է նաև 18 տարեկանը լրանալուց հետո տրամադրվող ծառայությունը, որպես պետության կողմից տրամադրվող հետխնամքի հատուկ աջակցություն: ՀՀ 2018 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 152,828.4 հազ. դրամ՝ 94 երեխայի խնամքը 90 խնամատար ընտանիքներում /նախկինում 25 երեխա/ կազմակերպելու համար:

Հիմք ընդունելով վերոնշյալը, նախարարությունը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում «ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ իրականացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաների խնամքի կազմակերպումը խնամատար ընտանիքներում: Հիմնադրամի կողմից արդեն իսկ ընտրվել են

մարզերի բնակիչ քաղաքացիներ, ովքեր պատրաստ են խնամատարության միջոցով իրականացնել բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող այնպիսի երեխաների խնամքը, որոնց խնամքն ու դաստիարակությունը հնարավոր չէ իրականացնել կենսաբանական ընտանիքում: Խնամատարության ծրագրում ընդգրկվելու համար դիմել է շուրջ 150 ընտանիք: Խնամատար ծնող է գրանցվել հանրապետության 25 համայնքից շուրջ 100 թեկնածու, որոնք անցել են խնամատարության թեմայով դասընթացներ և սոցիալական դեպք վարողների հետ համատեղ իրականացված գնահատման հիման վրա ստացել դրական եզրակացություններ:

Նախարարության համակարգում գործող՝ երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատությունում (մանկատներում) իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած շուրջ 620 երեխայի խնամքը, այդ թվում՝ շուրջ 450 երեխայի խնամքը՝ երեք հատուկ (մասնագիտացված) հաստատությունում: Թեև երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, այդուհանդերձ սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով պայմանավորված՝ ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը հատուկ (մասնագիտացված) հաստատություններում:

Նախարարության համակարգի՝ երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ վեց հաստատությունում մինչև 2017 թվականի սեպտեմբեր ամիսը խնամվել է սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ շուրջ 400 երեխա, որոնց խնամքը տարանջատվում է կրթությունից: Բարեփոխումներով պայմանավորված՝ 2017 թվականի սեպտեմբեր ամսից մինչև տարեվերջ Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության վերակազմակերպման արդյունքում վերոնշյալ հաստատություններում շուրջօրյա խնամք է ստացել 355 երեխա:

Նախարարության համակարգի՝ երեխաների սոցիալական հոգածության ցերեկային 3 կենտրոնները ծառայություններ են տրամադրել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 6-18 տարեկան շուրջ 300 երեխայի և նրանց ընտանիքներին, իսկ երեխայի և ընտանիքի աջակցության երկու կենտրոնները՝ շուրջ 150 երեխայի: «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության՝ երեխաների 4 ցերեկային կենտրոնում (Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան, Բերդ) ծառայություններ են մատուցվել դժվար իրավիճակում հայտնված առնվազն 250 երեխայի:

«Երևանի երեխաների «Զատիկ» սոցիալական աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան 17 երեխայի տրամադրել է մինչև 6 ամիս ժամկետով շուրջօրյա խնամք:

Առանց ծնողական խնամքի մնացած 25 երեխա խնամվել է խնամատար ընտանիքներում:

Հաստատություններից երեխաներին կենսաբանական ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում և կանխարգելում) միջոցառման շրջանակում ՀՀ Լոռու մարզում, 2014 թվականից՝ նաև ՀՀ Շիրակի մարզում, կենսաբանական ընտանիք է վերադարձել 30 երեխա, կանխարգելվել է 70 երեխայի մուտքը հաստատություններ: Միջոցառման շրջանակում

ընտանիքներին տրամադրվել է բնախրային օգնության փաթեթ՝ սննդի զամբյուղ, հագուստ և կոշիկ, գրենական պիտույքներ և դասագրքեր, էներգետիկ ծառայությունների փոխհատուցում:

«Հայաստանի Հանրապետության մանկատների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի շրջանակներում «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի 11 շրջանավարտի տրամադրվել է միանվագ դրամական օգնություն:

### ***Ժողովրդագրություն***

1) ««Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.12.2017թ. թիվ ՀՕ-290-Ն ՀՀ օրենք,

2) ««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 21.12.2017թ. թիվ ՀՕ-288-Ն ՀՀ օրենք,

3) «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» 06.12.2017թ. թիվ ՀՕ-238-Ն ՀՀ օրենք,

### ***ՀՀ կառավարության որոշումներ***

1) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 02.03.2017թ. N 242-Ն որոշում,

2) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1179-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 23.06.2017 թ. N 727-Ն որոշում,

3) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 10.08.2017թ. թիվ 976-Ն որոշում,

4) «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության 10.08.2017թ. թիվ 977-Ն որոշում:

2017թ. ընթացքում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել պետական նպաստների ոլորտում առցանց մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմանը՝ նպաստների նշանակման և վճարման գործընթացում առկա ռիսկերը նվազեցնելու, ծառայությունների հասանելիությունն ու մատչելիությունն ապահովելու նպատակով, ինչպես նաև նպաստների նշանակման ու վճարման գործընթացի վարչարարության պարզեցմանը:

Այս նպատակով իրականացված օրենսդրական փոփոխությունների և «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի կատարելագործման արդյունքում 2018թ-ից ապահովվել է.

- երեխայի ծննդյան միանվագ նպաստ (այդ թվում՝ 3-րդ և հաջորդ երեխայի ծննդյան դեպքում), խնամքի նպաստ, թաղման նպաստ նշանակելու դիմումն առցանց ներկայացնելը.
- ՔԿԱԳ-ի մարմինների հետ ծննդյան ակտերի և ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ տեղեկատվության փոխանակության համակարգի ներդրումը և դրա կիրառմամբ ՔԿԱԳ տեղեկատվական համակարգին էլեկտրոնային հարցում կատարելը, անհրաժեշտ

տվյալներ ստանալը, այդ տվյալները «Էլեկտրոնային կենսաթոշակ» ՏՀ-ում հաշվառելը և դրանց հիման վրա որոշումներ կայացնելը (երեխայի ծննդյան միանվագ և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի, թաղման նպաստ նշանակելը կամ մերժելը)։

Պետական նպաստների վճարման գործընթացի արդյունավետությունը մեծացնելու, վարչարարությունը պարզեցնելու նպատակով մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը (ընդունվել են ՀՀ Ազգային Ժողովի 2017 թ. դեկտեմբերի 6-ի նիստում), որով առաջարկվում է միասնական սկզբունքների ներքո սահմանել նպաստներն անկանխիկ եղանակով վճարելու համար նախատեսված հատուկ բանկային (սոցիալական) հաշիվ բացելուն և վարելուն, այդ հաշվից օգտվելուն, հաշվին առկա միջոցները տնօրինելուն առնչվող առանձնահատկությունները։

Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման և վճարման ընթացակարգերը հստակեցնելու, մինչև 2 տարեկան երեխայի խնամքի արձակուրդի ժամանակահատվածի սկիզբը կամ վերջը եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման համակարգ մուտքագրելու կապակցությամբ գործատուների կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու հնարավորությունները սահմանափակելու նպատակով մշակվել են «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը (ընդունվել են ՀՀ Ազգային Ժողովի 2017թ. դեկտեմբերի 21-ի նիստում)։

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նշանակված՝ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի, երեխայի ծննդյան միանվագ նպաստի, ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափերը սահմանում է Կառավարությունը։ 2017 թվականի ընթացքում չափերը չեն փոխվել։

ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1566-Ն որոշման 1.1-ին կետի համաձայն՝ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը սահմանվել է 18000 դրամ։

**ՀՀ կառավարության 2014թ վականի մարտի 6-ի թիվ 275-Ն որոշմամբ սահմանվել է.**

1) երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը՝ ըստ նոր ծնված երեխայի հերթական կարգաթվի՝

ա. առաջին երեխայի ծնվելու դեպքում՝ հիսուն հազար դրամ,

բ. երկրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ հիսուն հազար դրամ,

գ. երրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ,

դ. չորրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ,

ե. հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

2) միաժամանակ մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ

նպաստի չափը յուրաքանչյուր երեխայի համար՝ նոր ծնված երեխաներից ամենաբարձր կարգաթիվ ունեցող երեխայի համար սահմանված չափով.

3) երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստի՝ պետական աջակցության հաշվին մուտքագրվող չափը՝

ա. երրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ հինգ հարյուր հազար դրամ,

բ. չորրորդ երեխայի ծնվելու դեպքում՝ հինգ հարյուր հազար դրամ,

գ. հինգերորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծնվելու դեպքում՝ մեկ միլիոն դրամ:

ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1499-Ն որոշմամբ 2015 թվականի հունվարի 1-ից ծերության նպաստի չափը սահմանվել է 16000 դրամ: Իսկ հաշմանդամության նպաստի չափերը հետևյալն են.

ա) առաջին խմբի հաշմանդամի համար՝ 21500 դրամ,

բ) երկրորդ խմբի հաշմանդամի համար՝ 19000 դրամ,

գ) երրորդ խմբի հաշմանդամի համար՝ 16000 դրամ:

#### **4. Սոցիալական աջակցություն**

Պետական նպաստները 2017 թվականին նշանակվել և վճարվել են «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-154-Ն) սահմանված դրույթներին համապատասխան՝ որպես «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-231-Ն) 8-րդ հոդվածով նախատեսված սոցիալական ծառայությունների առանձին ձև: Պետական նպաստների նշանակման և վճարման կարգերն ու առանձնահատկությունները, ինչպես նաև չափը սահմանում է ՀՀ կառավարությունը: Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն) նշանակման և վճարման գործընթացը 2017 թվականին իրականացրել են սոցիալական աջակցության տարածքային գործակալությունները կամ բաժինները (այսուհետ՝ ՍԱՏՍ), որոնք պետական մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի առանձնացված ստորաբաժանում են:

#### **Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ.**

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (նախկինում ընտանեկան նպաստ) ծրագիրը կոչված է աջակցելու աղքատ ընտանիքներին, ունի սոցիալական բարձր հնչեղություն:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագրի հասցեականության մեծացման հարցը մշտապես դիտարկվել է որպես սոցիալական աջակցության ոլորտի մարտահրավեր, և դրան հասնելու նպատակով իրականացվող միջոցառումները հիմնականում իրականացվել են 4 ուղղությամբ՝ ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, վարչարարության բարելավում, տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստում և բնակչության իրազեկում:

Ընտանեկան նպաստի համակարգում իրականացված բարեփոխումներն իրականացվել են հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի սահմանած ուղղություններին, ՀՀ ՎԿ ամենամյա տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների տվյալներին համապատասխան՝ փոփոխելով ընտանիքների

անապահովության գնահատման կարգը:

Ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքը որոշվում է ընտանիքի անապահովության միավորով, որը որոշվում է ՀՀ կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշմամբ հաստատված ընտանիքների անապահովության գնահատման կարգով: Համաձայն այդ կարգի ընտանիքի (տնային տնտեսության) անապահովության աստիճանը գնահատելու նպատակով հաշվի են առնվում աղքատությունը բնութագրող անուղղակի ցուցանիշներ՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամի սոցիալական խումբը, ընտանիքում անաշխատունակ անդամների թիվը, բնակավայրը, ընտանիքի բնակարանային պայմանները, ընտանիքի միջին ամսական եկամուտը և այլն:

Վերոհիշյալ յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր թվային արժեքը, որոնց արտադրյալով որոշվում է ընտանիքի անապահովության միավորը: Որքան մեծ է այդ միավորը, այնքան անապահով է համարվում այդ ընտանիքը:

2008 թվականի հունվարի 1-ից ընտանեկան նպաստի իրավունքի ճանաչման սահմանային միավորը սահմանվեց «30.00», նախորդ տարվա «33.00» անապահովության միավորի դիմաց: Այս մեծությունը պահպանվել է նույնությամբ մինչև 2017 թվականը ներառյալ:

Ընտանեկան նպաստների բնագավառում հիմնական փոփոխությունները կատարվել են 2012 թվականին՝ ընտանիքի միջին ամսական եկամտի կառուցվածքում, եկամտի գործակցի հաշվարկման բանաձևում, իսկ 2017 թվականին՝ ներդրվել է ընտանիքի յուրաքանչյուր աշխատունակ անդամի աշխատանքի շուկայում դրսևորած վարքագծի գնահատումը՝ նպատակ ունենալով զբաղվածության ապահովման և պետական սոցիալական աջակցության ծրագրերը հատկապես բնակչության անաշխատունակ շերտերին (երեխաներին, միայնակ տարեցներին, բազմազավակ ընտանիքներին և այլ խմբերին) ուղղելու սկզբունքային մոտեցումը:

Պետական նպաստների նշանակման և վճարման գործընթացի վարչարարության բարելավմանն ուղղված փոփոխությունները վերաբերում են նախ և առաջ այն հանգամանքին, որ ավելացել են այն տվյալների թիվը, որոնք որևէ պետական նպաստի իրավունքի իրացման համար ընդունվում են դիմողի հայտարարությամբ, իսկ դրանց հավաստիությունը ստուգվում է առցանց եղանակով ձեռք բերված տվյալով:

Մասնավորապես, հարկ է նշել, որ առցանց եղանակով տվյալներ են ստացվում ՀՀ ոստիկանության բնակչության պետական ռեգիստրի տեղական ստորաբաժանումներից (բնակչության կամ ընտանիքի կազմի մասին տվյալը), ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից (ընտանիքի ունեցած հողատարածքի մակերեսի, տեսակի և դրա կադաստրային գուտ եկամտի մասին տվյալները): Նշված երկու տվյալն օգտագործվում է անմիջականորեն ՄԱՏՄ-ների կողմից՝ իրենց առցանց հարցմանը տրված պատասխանի ձևով: Առցանց են ստացվում նաև տվյալներ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունից, ՀՀ ԿԱ ոստիկանության ՀՀ ճանապարհային ոստիկանությունից, ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություններից՝ ամսական պարբերականությամբ «Նորք» ՄՕՏԻԿ հիմնադրամի կողմից, ուր իրականացվում են տարբեր տեղեկատվական բազաների տվյալների կենտրոնացված համադրումներ. դրանց արդյունքներով ձևավորված ցուցակները տրամադրվում են ՄԱՏՄ-ներին, որոնք աշխատում են այդ

ընտանիքների հետ՝ կրկին ուսումնասիրում նրանց սոցիալ-տնտեսական պայմաններն ու առաջարկությունները կայացնում ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունքի կապակցությամբ:

Այս ուղղությամբ արված փոփոխություններն իրենց արտահայտությունն են գտել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների, նաև ընտանեկան նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թվի հարաբերակցություններում: Այսպես, ստորև ներկայացվում է փոփոխությունների դինամիկան.

**Աղյուսակ 1. Ընտանեկան (կամ սոցիալական) նպաստը ՀՀ-ում 2012-2017թթ.**

	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Հաշվառված ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	15.9	16.5	17.2	17.4	17.41	15.28
Նպաստառու ընտանիքներ (% հաշվառված ընտանիքների թվից)	77.69	79.78	77.71	77.57	80.8	83
Նպաստառու ընտանիքներ (% ՀՀ ընտանիքների թվից)	12.36	13.16	13.37	13.53	14	12.7
Երեխա ունեցող ընտանիքներ (% նպաստառու ընտանիքներից)	80.69	76.97	76.27	76.91	75.5	75.2
ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներ (մլրդ)	37.105	37.105	37.105	38.361	38.361	39.498
Նպաստառու ընտանիքների թիվ	96 309	102 570	104 130	105 408	106 296	103 723
Նպաստի միջին չափ (դրամ)	29 350	29 350	30 350	30 350	31 350	31 350

2017թ.- ին նույնպես շարունակվել է նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես բազմազավակ ընտանիքներին, հաշվի առնելով նաև ընտանիքի բնակության վայրը՝ բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր:

Ընտանեկան նպաստի չափը որոշվում է նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի մինչև 18 տարեկան յուրաքանչյուր անդամի (երեխայի) համար տրվող հավելումը, որի չափը տարբերակվում է ելնելով տվյալ ընտանիքի անապահովության միավորից, ընտանիքի բնակության վայրից, ինչպես նաև ընտանիքում երեխաների թվից:

Սոցիալական, ընտանեկան նպաստների ինչպես նաև եռամսյակային հրատապ օգնության բազային մասը 2017 թվականի համար սահմանվել է 18000 դրամ:

Ըստ անապահովության միավորի՝ հավելման չափերը տարբերակվում են երեք մակարդակով՝ առաջինը՝ 30.01-35.00 անապահովության միավորների տիրույթ, երկրորդ մակարդակը՝ 35.01-39.00, և երրորդը՝ 39.01 և ավելի: Այս տիրույթներում հավելման չափերը միմյանցից տարբերվում են 500 դրամով՝ որքան բարձր է անապահովության միավորը, այնքան բարձր է հավելման չափը:

Անապահովության միավորների յուրաքանչյուր տիրույթում հավելման չափը նույնպես տարբերակվում է, սահմանամերձ, ինչպես նաև բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքի երեխայի համար տրվող հավելումը 500 դրամով ավելի է տվյալ տիրույթի համար սահմանված հավելման չափից, իսկ եթե ընտանիքում երեխաների թիվը 4 և ավելի է, ապա նրանցից յուրաքանչյուրի համար տրվող հավելման չափը բարձր է ևս 1000 դրամով:

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով ընտանիքների անապահովության գնահատման համակարգում սահմանվել են միանվագ հրատապ օգնության նշանակման հստակ հիմքեր՝ ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան, երեխայի առաջին դասարան ընդունվելու և ընտանեկան կամ սոցիալական նպաստի իրավունք ունեցող ընտանիքի անդամի (եթե կենսաթոշակառու, ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեցող չէ) մահվան դեպքում՝ հուղարկավորության:

Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքում երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնության չափը սահմանվել է 50 հազար դրամ, երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնության չափը՝ 25 հազար դրամ, իսկ ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ հուղարկավորության միանվագ հրատապ օգնության չափը՝ 50 հազար դրամ: 2017թ. ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին միանվագ հրատապ օգնություն է տրվել երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 4974 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 10492 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան դեպքում՝ 156 ընտանիքի:

Համակարգում հաշվառված, սակայն ընտանեկան նպաստի իրավունք չունեցող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի կարճատև ֆինանսական խնդիրները լուծելու նպատակով՝ ՍՍՏՍ-ն սոցիալական աջակցության խորհրդի առաջարկությամբ կարող է տվյալ ընտանիքին նշանակել հրատապ օգնություն՝ եռամսյակով: Հրատապ օգնություն նշանակելու հարցը կարող է քննարկվել յուրաքանչյուր եռամսյակ և ընդունվել որոշում հրատապ օգնությունը նշանակելու կամ մերժելու մասին: Հրատապ օգնության չափը սահմանվում է բազային նպաստի չափին հավասար: 2017թ. հրատապ օգնություն են ստացել միջինում 5322 ընտանիք:

Միաժամանակ կարևորվում է սոցիալական ծառայությունները փաթեթով տրամադրելու խնդիրը: Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրումը միջոց է սոցիալական ծառայությունների որակը, մատչելիությունը բարձրացնելու, դեպի հաճախորդները կողմնորոշելու, դրանց գնահատման և մշտադիտարկման, ինչպես նաև ամբողջ գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար:

Նշված համակարգին անցնելու գործընթացը բավականին երկարատև է, այն պետք է իրականացվի ատիճանաբար և առնչվում է կառավարման ոլորտի տարբեր ճյուղերի: Համակարգի ներդրման համար իրականացվում է իրավաստեղծ ծավալուն աշխատանք, հստակեցվում են յուրաքանչյուր օղակի լիազորությունների շրջանակները, ինչպես նաև համատեղ աշխատանքի եզրերը, մշակվում են մեխանիզմները, դրանց նորմացույցերը և այլն:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման նպատակով 2012 թվականի հուլիսի 26-ին ընդունվել է ՀՀ կառավարության N 952-Ն որոշումը, որով հաստատվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի (այսուհետ՝ համակարգ) ներդրման



ծրագիրը, նախատեսվել և ՀՀ Արարատի մարզում իրականացվել է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման փորձնական ծրագիր:

Համակարգի ներդրումը ենթադրում է հանրապետությունում ձևավորել համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ (ՀՄՄԿ), որոնցում տեղակայվելու են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության սոցիալական ապահովության ապահովության բաժինները, զբաղվածության տարածքային (մարզային) կենտրոնները, բժշկասոցիալական փորձաքաննական հանձնաժողովները, ՀՀ մարզպետարանների (Երևանի, Գյումրու, Վանաձորի, Արարատի և Ջերմուկի քաղաքապետարանների) սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները: 2017թ. դրությամբ սկսել են գործել թվով 22 ՀՄՄԿ-ներ:

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգի հիման վրա տրամադրվել են նաև այլ ծառայություններ: ՀՀ կառավարության 03.11.2016թ. N1122-Ն որոշման համաձայն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ անապահովության 20.00 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքներն ընդգրկվել են բնական գազի սակագնի մեղմացման ծրագրում՝ թվով 82666, սպառել են ցածր սակագնով ընդամենը՝ 36,811 մլն մ3 բնական գազ կամ յուրաքանչյուրը՝ ցածր սակագնով միջինում սպառել է 445,3.մ3, նախատեսված 600 մ3 դիմաց, ինչպես նաև էլեկտրական էներգիայի սակագնի մեղմացման ծրագրում՝ թվով 120508 ընտանիք:

ՀՀ կառավարության 27.07.2006թ. N 1183-Ն որոշման համաձայն մասնագիտական կրթության վարձավճարի մասնակի փոխհատուցման ծրագրից օգտվել են 2667 ուսանողներ, որոնց ընտանիքները հաշվառված են եղել ընտանիքներ անապահովության գնահատման համակարգում և ունեցել են 30.00 միավորից բարձր միավոր:

ՀՀ կառավարության 4.03.2004թ. N318-Ն որոշմամբ սահմանված կարգով պետության կողմից երաշխավորված ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում անվճար սպասարկում և ծառայություններ են ստացել ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 30.00 միավորից բարձր միավոր ունեցող 10754 անձինք:

Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018

*Վիճակագրական ժողովածու*

**ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ՝**

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի  
անդամ, ՀՀ ՎԿ նախագահի տեղակալ

**ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

☎ (37411) 523 927

☎ (37411) 524 618

**ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՊԱՏՐԱՍՏԵԼ ԵՆ**

ՀՀ ՎԿ տնային տնտեսությունների  
հետազոտությունների բաժինը

☎ (374 11) 524 326

Մարտիրոսովա Դիանան

ՀՀ ՎԿ նախագահի խորհրդական

☎ (374 11) 560 349

***Թողարկման պատասխանատու՝***

ՀՀ վիճակագրական կոմիտեի  
վիճակագրական տեղեկատվության  
տարածման բաժին

☎ (374 11) 523 356